Արձանագրություն N 3
ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/6-Լ) ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 05 հունիսի 2019 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Ղարիբջանյանը
անդամներ՝ Հ. Վանյան, Ջ. Բաբայան, Լ. Դեմիրչյանը. Մ. Կարապետյանը
քարտուղար՝ Լ. Հարությունյանը

I. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Ա. Ղարիբջանյան)

1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ՝

   ա/ «ՈՍԿԵ ԵՐԱԶՆԵՐ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ 8 539 ՀՀ դրամի չափով:

   Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասին 2-րդ կետը և հաշվի առնելով, որ մասնակցի գնային առաջարկը կազմում է 180 000 ՀՀ դրամ, որի մեկ տոկոսը կազմում է 1 800 ՀՀ դրամ, «ՈՍԿԵ ԵՐԱԶՆԵՐ» ՍՊԸ-ն սույն գնման գործընթացին մասնակցության իրավունք չուներ:

2. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

   ա / Մերժել «ՈՍԿԵ ԵՐԱԶՆԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

   բ/ Գնահատող հանձնաժողովի նիստին հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին:

   գ/ ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/6-Լ) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «Պոժմաստեր» ՍՊԸ-ին:

   դ/ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի տվյալները՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային

մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով:

ե) Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ. Խորենացու-3, 7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Ղարիբջանյան

անդամներ՝ _____ Հ. Վանյան

_____ Ջ. Բաբայան

_____ Լ. Դեմիրչյան

_____ Մ. Կարապետյան

քարտուղար՝ _____ Լ. Հարությունյան